# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՃՈՒՐԴԻ:

Այն տեղի կունենա 2022թ. մարտի 31 –ին սկիզբը ժամը 16:20-ից Վաղարշապատի համայնքապետարանի շենքում /Հասցեն՝ ք.Էջմիածին Սուրբ Մ.Մաշտոց փող. 0 շենք/: Աճուրդով վաճառվելու է Վաղարշապատ համայնքի սեփականությունը հանդիսացող ծառայողական տրանսպորտային միջոցը.

Լոտ՝ ԷՔ 16, GAZ 3102 թեթև մարդատար ավտոմեքենա, թափքը՝ սեդան, գույնը՝ ավանտյուրա (սև), թողարկման տարեթիվը 2007թ., նույնականացման համար-X9631020071373045, վազքը՝ 236927կմ, փոխանցման տուփը մեխանիկական, վառելիքը՝ բենզին:

Վիճակը՝ տեղազննության դրությամբ գտնվել է բավարար վիճակում, թափքի վրա առկա են մանր վնասվածքներ, քերծվածքներ, շարժիչի ծածկոցի ներկային մասը քայքայված է, շարժիչը գործարկվում է:

Մեկնարկային գինը՝ 990 000 /ինը հարյուր իննսուն հազար/ ՀՀ դրամ:

Նախավճարի չափը՝ 495 000 /չորս հարյուր իննսունհինգ հազար/ ՀՀ դրամ:

աճուրդային քայլի չափ ՝ 49 500 /քառասունինը հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ:

Մասնակցության վճարը 9900 /ինը հազար ինը հարյուր/ ՀՀ դրամ:

Սահմանափակումներ չկան:Աճուրդում հաղթող կհամարվի առավելագույն գին առաջարկած մասնակիցը: Աճուրդում հաղթող ճանաչված անձը պարտավոր է 10 օրվա ընթացքում վճարել առաջարկած ողջ գումարը և կնքել առուվաճառքի պայմանագիր: Աճուրդին մասնակցել ցանկացողները ոչ ուշ քան աճուրդի անցկացման օրվանից 3 աշխատանքային օր առաջ աճուրդային հանձնաժողովին պետք է ներկայացնեն՝ աճուրդին մասնակցության հայտը, անձնագիրը, մուծված մասնակցության վճարի անդորրագիրը /Վաղարշապատի համայնքապետարանի 900325151356 հաշվեհամարին/, իսկ աճուրդի անցկացման օրը մուծել աճուրդի նախավճարը: Հայտերն ընդունվում են ամեն օր (բացի շաբաթ և կիրակի օրերից) ժամը 9oo-18oo:

Վաճառվելիք լոտին մասնակիցները կարող են ծանոթանալ մինչև աճուրդի բացման նախորդող օրը՝ յուրաքանչյուր երեքշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին՝ ժամը 10:00-17:00 ընկած ժամանակահատվածում (բացառությամբ 13:00-14:00 ընկած ժամանակահատվածի):